

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԿՐԱ  
ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ  
ԸՆԴՈՒՆՄԱՆ

Համայնքի տարածքում տարիներ առաջ կառուցված մեծ թվով ավտոտնակների, ինչպես նաև բնակելի, հասարակական և արտադրական նշանակության շինությունների օրինականացման նպատակով յուրաքանչյուր տարի համայնքի ղեկավարին են դիմում այդ շինությունները կառուցած քաղաքացիները:

Անհրաժեշտություն է առաջացել Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի N 912-Ն որոշմամբ սահմանված կարգով Արովյան համայնքի տարածքում ինքնակամ կառուցված 374 ավտոտնակների, 13 արտադրական նշանակության, 32 բնակելի նշանակության և 16 հասարակական նշանակության կառույցների օրինականացման, օտարման կամ վարձակալության տրման մասին պատրաստել «Արովյան համայնքի սեփականություն համարվող հողամասերի վրա կառուցված ինքնակամ շինություններն օտարելու կամ վարձակալության իրավունքով տրամադրելու մասին» Արովյան համայնքի ավագանու որոշման նոր նախագիծ:

«Արովյան համայնքի սեփականություն համարվող հողամասերի վրա կառուցված ինքնակամ շինություններն օտարելու կամ վարձակալության իրավունքով տրամադրելու մասին» Արովյան համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում, ինչպես նաև Արովյան համայնքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ